



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

« _____ » 2014թ.

N _____

**ՀՀ ՓՈՒԿԱՐԶԱՊԵՏ,
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գևորգյան

Ձեր քննարկմանն է ներկայացվում «Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների, Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության աշխատողների կողմից իրականացվող այցելությունների համար վճարման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը:

Խնդրում եմ ներկայացնել Ձեր դիտողություններն ու առաջարկությունները:

Կից՝ 15 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

կատ. սոցիալական աջակցության վարչություն
հեռ. 560252

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
<http://www.mlsa.am> info@mlsa.am

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

_____ 2014 թվականի N ___ Ն

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում տեղակայված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների (այսուհետ՝ տարածքային մարմին) աշխատողների կողմից իրականացվող տնային այցելությունների համար վճարման կարգը՝ համաձայն N1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների (այսուհետ՝ տարածքային կենտրոն) աշխատողների կողմից գործատուներին, զբաղվածության պետական ծրագրերի մոնիթորինգի նպատակով կատարված այցելությունների համար վճարման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (այսուհետ՝ գործակալություն) աշխատողների կողմից իրականացվող տնային (կամ հիվանդանոցային, կամ քրեակատարողական հիմնարկ) այցելությունների համար վճարման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սահմանել տարածքային մարմինների, տարածքային կենտրոնների և գործակալության աշխատողների կողմից յուրաքանչյուր ընտանիք, գործատուին, հիվանդանոցային կամ քրեակատարողական հիմնարկ կատարած այցելության դիմաց վճարվող այցելության վճարի չափը.

1) տարածքային մարմնի, կենտրոնի կամ գործակալության տեղակայման վայրի համայնքից դուրս կատարած այցելություն՝ 500 ՀՀ դրամ,

2) տարածքային մարմնի, կենտրոնի կամ գործակալության տեղակայման վայրի համայնքում կատարած այցելություն՝ 200 ՀՀ դրամ:

3. Սահմանել, որ սույն որոշման 2-րդ կետով նախատեսված վճարը վճարվում է յուրաքանչյուր աշխատողի կողմից կատարված՝ օրական ոչ ավելի 10 այցելության դիմաց:

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո յոթնօրյա ժամկետում, տարածքային մարմինների աշխատողների կողմից իրականացվող տնային այցելությունների համար ծախսերի ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին սպասարկող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական բաժիններում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության անվամբ բացել գանձապետական հաշիվներ,

2) Երևանի և Արարատի քաղաքապետարանների տարածքային մարմինների աշխատողների կողմից իրականացվող տնային այցելությունների համար ծախսերի ֆինանսավորումն իրականացնել հայտ պահանջագրերի հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական բաժիններում Երևանի և Արարատի քաղաքային համայնքների անվամբ բացված եկամտային հաշիվներին փոխանցելու միջոցով:

5. Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում, իսկ հաջորդ տարիների համար մինչև հունվարի 20-ը սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների աշխատողների կողմից իրականացվող տնային այցելությունների ծախսերի ֆինանսավորման նպատակով, որպես բյուջեի ստորադաս կարգադրիչ, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել հաշվետու տարվա համար պահանջվող ֆինանսական միջոցների ծախսերի նախահաշիվները իրենց հաշվարկ հիմնավորումներով:

2) յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացով սահմանված ժամկետներում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել հաջորդ տարվա բյուջետային հայտի նախագիծը:

Առաջարկել Երևանի և Արարատի քաղաքապետերին յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացով սահմանված ժամկետներում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել հաջորդ տարվա բյուջետային հայտի նախագիծը:

6. Թույլատրել Հայաստանի Հանրապետության մարզպետներին, որպես բյուջեի ստորադաս կարգադրիչ, վճարումներ իրականացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության անվամբ բացած գանձապետական հաշիվներից:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ Ա Ր Գ

**ՀԱՄԱԼԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏՆԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում տեղակայված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների (այսուհետ՝ տարածքային մարմին) աշխատողների կողմից իրականացվող տնային այցելությունների համար վճարման հետ կապված հարաբերությունները:

2. Տարածքային մարմինների աշխատողները Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N145-Ն որոշման N3 հավելվածի 47-րդ կետով սահմանված տնային այցելությունների տվյալների գնահատմամբ տրված առաջարկությունների հիման վրա տարածքային մարմնի ղեկավարի որոշումը, դրա ընդունումից հետո մեկօրյա ժամկետում ներառում են սոցիալական դեպքի վարման տեղեկատվական բազա, որը մշտադիտարկվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից:

3. Տարածքային մարմինների աշխատողները մինչև յուրաքանչյուր ամսվա 3-ը տարածքային մարմնի ղեկավարին են ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ ամսվա ընթացքում կատարած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N145-Ն որոշման N3 հավելվածի 47-րդ կետով սահմանված, տնային այցելությունների թվի վերաբերյալ՝ համաձայն N 1 ձևի:

4. Տարածքային մարմնի ղեկավարը սույն կարգի 3-րդ կետով սահմանված հաշվետվությունները ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում և համապատասխան վերադաս մարմնին (Հայաստանի Հանրապետության մարզպետ, Երևանի, Արարատի քաղաքպետ) է ներկայացնում ամփոփ հաշվետվություն՝ տարածքային մարմնի կողմից նախորդ ամսվա ընթացքում կատարած տնային այցելությունների թվի վերաբերյալ՝ համաձայն N 2 ձևի:

5. Վերադաս մարմինը սույն կարգի 4-րդ կետով սահմանված հաշվետվությունները ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում և նախարարություն է ներկայացնում ֆինանսական միջոցների հայտ-պահանջագիր՝ համաձայն N 3 ձևի:

6. Նախարարությունը սույն կարգի 5-րդ կետով սահմանված ֆինանսական միջոցների հայտ-պահանջագրերը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարման ենթակա գումարները փոխանցում է վերադաս մարմնին սպասարկող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական բաժիններում նախարարության անվամբ բացված համապատասխան հաշիվներին:

7. Հայաստանի Հանրապետության մարզպետները, Երևանի և Արարատի քաղաքային համայնքների ղեկավարները նախարարության կողմից փոխանցված գումարը 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարում են համապատասխան տարածքային մարմինների աշխատողներին՝ համապատասխան բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

8. Հայաստանի Հանրապետության մարզպետները, Երևանի և Արարատի քաղաքային համայնքների ղեկավարները մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը սահմանված ձևաչափին համապատասխան նախարարություն են ներկայացնում հաշվետվություն՝ տրամադրված ֆինանսական միջոցների վերաբերյալ կատարված բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին:

9. Նախարարությունը, որպես բյուջեի գլխավոր կարգադրիչ, հինգօրյա ժամկետում հաստատում է ծախսերի նախահաշիվները և ներկայացնում Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին:

10. Հայաստանի Հանրապետության մարզպետարանները հաստատված ծախսերի նախահաշիվները ստանալուց հետո եռօրյա ժամկետում ապահովում են դրանց մուտքագրումը clienttreasury էլեկտրոնային ֆինանսավորման համակարգ:

11. Սույն կարգի վերահսկողությունն իրականացնում է նախարարությունը:

Ձև N 1

Սոցիալական ծառայություններ տրամադրող
_____ տարածքային մարմնի ղեկավար
Պարոն/ տիկին _____ -ին

Հաշվետվություն
20 թ. _____ ամսվա ընթացքում կատարած տնային այցելությունների
թվի վերաբերյալ

Այցելության վայրը	Այցելությունների թիվը (ընտանիք)
տարածքային մարմնի տեղակայման վայրի համայնքից դուրս կատարած այցելություն	
տարածքային մարմնի տեղակայման վայրի համայնքում կատարած այցելություն	
Ընդամենը	

Տարածքային մարմնի աշխատող՝ _____
Անուն, ազգանուն _____ ստորագրություն

« _____ » « _____ » 20_ թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Պարոն/ տիկին _____ -ին

Հայտ-պահանջագիր
_____ մարզի/քաղաքի սոցիալական ծառայություններ
տրամադրող տարածքային մարմինների աշխատողների կողմից 20 թ.
_____ ամսվա կատարած տնային այցելությունների թվի վերաբերյալ

Այցելության վայրը	Այցելությունների թիվը (ընտանիք)	Պահանջվող գումարը
տարածքային մարմնի տեղակայման վայրի համայնքից դուրս կատարած այցելություն		
տարածքային մարմնի տեղակայման վայրի համայնքում կատարած այցելություն		
Ընդամենը		

Գանձապետական/եկամտային հաշվի համարը՝ _____

Մարզպետ/քաղաքապետ՝

Անուն, ազգանուն

ստորագրություն

Կ. Տ

« _____ » « _____ » 20__ թ.

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻՆ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոնների (այսուհետ՝ տարածքային կենտրոն) աշխատողների կողմից գործատուներին և զբաղվածության պետական ծրագրերի մոնիթորինգի նպատակով կատարված այցելության համար վճարման հետ կապված հարաբերությունները:

2. Տարածքային կենտրոնների աշխատողները մինչև յուրաքանչյուր ամսվա 3-ը տարածքային կենտրոնի տնօրենին են ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ ամսվա ընթացքում կատարած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 524-Ն որոշման N9 հավելվածի 11-րդ, N19 հավելվածի 14-րդ և 18-րդ կետերով սահմանված այցելությունների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 29ի N578-Ն որոշման հավելված 1-ի 7-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն կատարված մոնիթորինգների թվի վերաբերյալ՝ համաձայն N 1 ձևի, որի կապակցությամբ տարածքային կենտրոնի տնօրենի որոշումը մեկօրյա ժամկետում ներառում են «Գործ» տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարան, որը մշտադիտարկվում է նախարարության կողմից:

3. Տարածքային կենտրոնի տնօրենը՝ սույն կարգի 2-րդ կետով սահմանված հաշվետվությունները ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում գործակալության պետին է ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ ամսվա ընթացքում կատարած այցելությունների թվի վերաբերյալ:

4. Գործակալության պետը սույն կարգի 3-րդ կետով սահմանված հաշվետվությունները ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, գործակալության համար հաստատված պահպանման ծախսերի նախահաշիվների շրջանակներում, ապահովում է այցելության ծախսերի ֆինանսավորումը տարածքային կենտրոնների կողմից՝ այցելություններ կատարած աշխատողների բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

5. Սույն կարգի վերահսկողությունն իրականացնում է նախարարությունը:

**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
աշխատակազմի զբաղվածության պետական
գործակալության-----
զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն
Պարոն/ տիկին _____ -ին**

Հաշվետվություն

**20 թ. _____ ամսվա ընթացքում կատարած գործատուներին
այցելությունների և մոնիթորինգների թվի վերաբերյալ**

N	Գործատուի և ծրագիր իրականացնող կազմակերպության անվանումը	Այցելության և մոնիթորինգների վայրը				Ընդամենը
		տարածքային կենտրոնի տեղակայման վայրի համայնքից դուրս կատարած այցելություն		տարածքային կենտրոնի տեղակայման վայրի համայնքում կատարած այցելություն		
		քանակ	գումար	քանակ	գումար	
1						
2						
Ընդամենը						

Տարածքային կենտրոնի աշխատող՝ _____ **_____**
Անուն, ազգանուն ստորագրություն

« _____ » « _____ » 20 ____ թ.

ԿԱՐԳ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏՆԱՅԻՆ (ԿԱՄ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ, ԿԱՄ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ) ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (այսուհետ՝ գործակալություն) աշխատողների կողմից իրականացվող տնային (կամ հիվանդանոցային, կամ քրեակատարողական հիմնարկ) այցելությունների համար վճարման հետ կապված հարաբերությունները:

2. Գործակալության բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների նախագահները և վերափորձաքննության բաժնի պետը մինչև յուրաքանչյուր ամսվա 3-ը գործակալություն պետին են ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ ամսվա ընթացքում կատարած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-Ն որոշման հավելվածի 11-րդ կետով սահմանված, բժշկասոցիալական փորձաքննության անձի գտնվելու վայրում (կամ հիվանդանոցային, կամ քրեակատարողական հիմնարկ) իրականացրած այցելությունների թվի վերաբերյալ՝ համաձայն N 1 ձևի:

3. Գործակալության պետը սույն կարգի 2-րդ կետով սահմանված հաշվետվությունները ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, գործակալության համար հաստատված պահպանման ծախսերի նախահաշվի շրջանակներում, ապահովում է այցելության ծախսերի ֆինանսավորումը՝ այցելություններ կատարած աշխատողների բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի
 ՀՀ ԲՍՓ գործակալության պետ
 Պարոն/ տիկին _____ -ին

Հաշվետվություն
 201 թ. _____ ամսվա ընթացքում կատարած տնային (կամ
 հիվանդանոցային, կամ քրեակատարողական հիմնարկ) այցելությունների թվի
 վերաբերյալ

N	Աշխատողի անուն, ազգանուն	Այցելության վայրը				Ընդամենը
		գործակալության տեղակայման վայրի համայնքից դուրս կատարած այցելություն		գործակալության տեղակայման վայրի համայնքում կատարած այցելություն		
		քանակ	գումար	քանակ	գումար	
1						
2						

ԲՍՓՀ-ի նախագահ/բաժնի պետ/ _____
 Ընուն, ազգանուն _____ ստորագրություն

« _____ » « _____ » 201_ թ.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Իրավական ակտի հիմնավորումը	
1.	<p>Անհրաժեշտությունը</p> <p>«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների աշխատողների տնային այցելություններ պարտադիր կատարելու նորմ:</p> <p>«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրակումն ապահովող մի շարք իրավական ակտերով նախատեսված են այցելություններ համապատասխան գործատուների մոտ առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի, աշխատատեղերի հնարավոր կրճատումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:</p> <p>Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովներն ըստ անհրաժեշտության իրականացնում են տնային (կամ հիվանդանոցային, կամ քրեակատարողական հիմնարկ) այցելություններ:</p> <p>«ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում տեղակայված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների աշխատողների կողմից տնային այցելությունների կատարելու համար համապատասխան ֆինանսական միջոցներ, սակայն այցելությունների կատարողականի հիման վրա վճարման կարգ սահմանված չէ:</p>
2.	<p>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</p> <p>2014 թվականին ուժի մեջ մտած մի շարք իրավական ակտերով՝ «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշումը, սահմանվել են, որ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների աշխատողները պարտադիր պետք է կատարեն տնային այցելություններ: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմամբ, սոցիալական դեպքի վարման շրջանակներում ավելացել են տնային այցելություններ կատարելու դեպքերը: Նախատեսված տնային այցելություններն իրականացնելու համար սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին անհրաժեշտ են համապատասխան ծախսեր: Զբաղվածության քաղաքականության նոր մոդելին անցմամբ ավելացել են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝</p>

	գործակալություն) տարածքային կենտրոնների մասնագետների կողմից գործատուներին, այդ թվում՝ հող օգտագործող գործատուներին (2014թ.՝ 1800 ծրագիր կամ շուրջ 5000 շահառու) այցելությունները: Այցելություններ են կատարվում նաև ԲՍՓՀ աշխատողների կողմից:
3.	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը
	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը միտված է ՀՀ-ում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմանը, սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:
4.	Կարգավորման նպատակը և բնույթը
	Նախագծով ապահովվում է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից իրականացվող տնային այցելությունների դիմաց կատարված ծախսերի համարժեք գումարի վճարման գործընթացը:
5.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	Նախագծի մշակման աշխատանքներում մասնակցել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմը:
6.	Ակնկալվող արդյունքը
	Սոցիալական պաշտպանության համակարգում գործող տարածքային մարմինների աշխատողների կողմից այցելությունների բնականոն գործընթացի ապահովում

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների, Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության աշխատողների կողմից իրականացվող այցելությունների համար վճարման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում պետական բյուջեի ծախսերում և եկամուտներում ավելացում կամ նվազեցում չի ակնկալվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների, Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության աշխատողների կողմից իրականացվող այցելությունների համար վճարման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխությունների կատարման անհրաժեշտություն չկա: